

- 1) «Հայրենի հողը» (Ավ. Իսահակյան), «Ամբոխները խելագարված» (Ե. Չարենց), «Հարճը» (Գ. Վարուժան)
- 2) «Հառաչանք» (Հ. Թումանյան), «Սոմա» (Ե. Չարենց), «Եվ այր մի՛ Մաշտոց անուն» (Պ. Սևակ)
- 3) «Աբու-Լալա Մահարի» (Ավ. Իսահակյան), «Հին աստվածներ» (Լ. Շանթ), «Մատյան ողբերգության» (Գրիգոր Նարեկացի)
- 4) «Բիրլիական» (Հ. Շիրազ), «Արա Գեղեցիկ» (Ն. Չարյան), «Թմկաբերդի առումը» (Հ.Թումանյան)

**ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ
ԵՎ
ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ**

ԹԵՄԱ 8

Խմբի համարը

Նստարանի համարը

Հարգելի՛ դիմորդ

Առաջադրանքները կատարելիս յուրաքանչյուրում պետք է ընտրել այն տարբերակը, որը Ձեր կարծիքով ճիշտ պատասխանն է, և պատասխանների ձևաթղթի համապատասխան մասում կատարել նշում:

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանք և պատասխանների առաջարկվող տարբերակները: Եթե Ձեզ չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով Դուք կարող եք այն բաց թողնել և դրան անդրադառնալ ավելի ուշ:

Ձեր առջև դրված թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը Դուք ազատորեն կարող եք օգտագործել սևագրության համար: ***Թեստ-գրքույկը չի ստուգվում: Ստուգվում է միայն պատասխանների ձևաթուղթը:***

Առաջադրանքները կատարելուց հետո չմոռանաք պատասխանները ուշադիր և խնամքով նշել պատասխանների ձևաթղթում: Պատասխանների ձևաթղթի ճիշտ լրացումից է կախված Ձեր քննական միավորը:

Ցանկանում ենք հաջողություն:

- 1 Ո՞ր շարքի բոլոր բառերում է գրվում *ը*:
- 1) ալլ-նտրանք, հյուր-նկալ, հոտ-նկայս, գահ-նկեց
 - 2) առ-նթեր, ակ-նբախ, ան-նդիատ, գիրկ-նդխառն
 - 3) դյուր-նկալ, չ-նկնել, խոյ-նթաց, որոտ-նդոստ
 - 4) առ-նչվել, ան-նթեռնելի, խոչ-նդոտ, ինքն-ստինքյան

- 2 Ո՞ր շարքի ոչ մի բառում չի գրվում *թ*:
- 1) բար-, ար-ուկել, խոր-ություն, պարապուր-
 - 2) կորնթար-, կարմրախայ-, հար-արել, կա-սա
 - 3) խր-վիլակ, Վար-իթեր, եր-իկ, փ-ախտ
 - 4) դր-ել, աճուր-, բուր-, փու-կոտ

- 3 Ո՞ր շարքի բոլոր բառերում է գրվում *ւ*:
- 1) բ-եկնախեժ, եր-ույթ, գեր-արել, սեթ-եթել
 - 2) թեթ-ոտն, հոգ-որդի, գոտ-որել, եղր-անի
 - 3) սերկ-իլ, հ-ք, կար-որ, հետ-ակ
 - 4) որ-է, հոգ-որ, հոգ-արք, ոսկ-որել

- 4 Ո՞ր շարքում ուղղագրական սխալ *չկա*:
- 1) խրտվիլակ, ժայտքել, ճմռթել, հարբուխ
 - 2) պաքսիմատ, պախուրց, սպրդել, անձկալի
 - 3) ատաղձագործ, դժողք, տարերք, բիրտ
 - 4) արհավիրք, խուրձ, պապագ, ամբրոս

- 5 Ո՞ր շարքում գաղտնավանկ ունեցող բառ *կա*:
- 1) քաղցրասեր, ծաղկածիծաղ, կուսակցական, մատնաչափ
 - 2) մաքրամաքուր, մանրակ, գանգրահեր, կաթնակեր
 - 3) փափկասուն, անընչասեր, խառնիխումն, ուղղածիգ
 - 4) գեղեցկություն, ակնաբույժ, վերջնագիր, կապտերանգ

- 6 Ո՞ր շարքի բոլոր բառերի (կապակցությունների) բաղադրիչներն են գրվում *միասին*:
- 1) վայր(ի)վերո, նոր(ջուղայեցի), առ (այն), համ(երկրացի)
 - 2) բարձր(աշխարհիկ), հիսուն(երեք), առ(այժմ), ծունկ(չոքել)
 - 3) առ(ձեռն), բերնե(բերան), քաջ(առողջություն), թեթև (քաշային)
 - 4) բուժ(օգնություն), երկ(կենցաղ), ի (վերուստ), առ(հավետ)

78 Նշել բաց թողած բառակապակցությունների տեղադրման ճիշտ հաջորդականության տարբերակը:

Հասկերուն մեջ, վերևեն,
 - -
 Աստղեր մյուռոն կծորեն:
 - :-
 Քանի խուրձեր շաղերով,
 - -
 Ես կապեցի խաղերով:
 - :-

(1. Վարդենիմ թաց է, 2. Ասուպը անցավ, 3. Ծոցիկը բաց է, 4. Գեմքը լուսացավ)

- 1) 3, 1, 4, 2
- 2) 4, 2, 3, 1
- 3) 1, 3, 2, 4
- 4) 2, 4, 1, 3

79 Տրված հատվածներից ո՞րը որ ստեղծագործությունից է:

- | | |
|---|-----------------------------|
| 1. – Վարձա՛կն ահա, տեղ բացեք,
վարձա՛կը, վարդ տեղացեք,
Մագերուն մեջ, ոտքին տակ
մարգարիտներ լեցուցեք: | ա. «Վայրկյան» (Մ. Մեծարենց) |
| 2. Ես ուզեցի լուռ մենանալ,
Սիրել փրթիթք, խորշեր թավուտ,
Սիրել կայծերն երկնի կապուտ,
Առտըվան շաղն, իրիկվան բալ,
Ճակատագրիս սև գիծ կարդալ,
Խոկալ, սուգիլ, ըզմայլիլ սուտ: | բ. «Հարճը» (Գ. Վարուժան) |
| 3. Թույլ շրշյուն մը, հետո բույր մը մշկենի.
Եվ համրագին գիրքը ձեռքես կ' իյնա վար.
Երագներու պերճուհին է որ կ'անցնի,
Ու կը փոթի ծովակն հոգվույս՝ մեղմավար: | գ. «Տրտունջք» (Պ. Գուրյան) |
| 4. Կ'ըլլան մարդիկ, որ լացող մը չ'ունին,
Անոր համար Նա դըրավ այդ լուսին.
Եվ մահամերձն ալ կ'ուզե երկու բան,
Նախ՝ կյա՛նքը, վերջը՝ լացող մ'իր վըրան: | դ. «Սիրել» (Պ. Գուրյան) |

- 1) 1-բ, 2-դ, 3-ա, 4-գ
- 2) 1-գ, 2- ա, 3-դ, 4-բ
- 3) 1-բ, 2-ա, 3-դ, 4- գ
- 4) 1-գ, 2-դ, 3-ա, 4-բ

76 Պարբերությունները նշող թվերի դասավորության ո՞ր տարբերակն է համապատասխանում շարադրանքի (տեքստի) տրամաբանական և քերականական ճիշտ կառուցվածքին:

1. Կոստանդինը, կրթությամբ և կրոնով կաթոլիկ և նաև եվրոպացի լինելով, հենց որ թագավոր դարձավ, իր վարմունքով աստիճան եղավ ժողովրդին, քանի որ նա իր արքունիքի մեջ մտցրեց եվրոպական խորթ սովորություններ: Ժողովուրդը և զորքը, չկարողանալով տանել այս անկարգությունները, նրան սպանեցին մեկ տարի թագավորելուց հետո:
2. Քանի որ Լևոն Ե-ի մահից հետո Ռուբինյան թագավորների ցեղը սպառված էր, նրանց հեռավոր ազգականներից մեկը՝ Կոստանդին անունով, ընտրվեց հայոց թագավոր: Այս Կոստանդինը որդին էր Լևոն Գ-ի Չապել աղջկա, որն ամուսնացած էր Կիպրոսի թագավորի եղբոր հետ:
3. Այս ամենից հետո հայերը նոր միայն հասկացան օտարազգի և լատինական թագավորի՝ Կիլիկիայի գահի վրա նստեցնելու վնասները և թագավոր ընտրեցին Կոստանդին Գ-ին, որը Հեթում իշխանի որդին էր և մոր կողմից Ռուբինյան էր: Նա խաղաղեցրեց կրոնական երկպառակությունները և արգելեց հայոց եկեղեցում կաթոլիկական ծեսերը՝ այսպիսով խաղաղեցնելով ժողովրդի դժգոհությունը:
4. Հայերը, այս ամենից չխրատվելով, թագավոր ընտրեցին նրա եղբայր Գվիդոնին, որը, իր եղբոր վարմունքին հետևելով, ավելի ուժ տվեց կաթոլիկությանը և սկսեց պապի հետ դեսպանախոսություններ անել: Գվիդոնը ևս արժանացավ իր եղբոր ճակատագրին:

- 1) 2, 4, 1, 3
- 2) 1, 2, 3, 4
- 3) 2, 1, 4, 3
- 4) 2, 1, 3, 4

77 Ո՞ր միտքը չի հակասում շարադրանքի (տեքստի) բովանդակությանը:

Արա Գեղեցիկի մահից հետո Հայաստանը կորցնում է իր ինքնիշխանությունը և դառնում է Ասորեստանի պետության ստորադրյալ: Թեպետ Հայաստանը կառավարող իշխանները համարվում էին Ասորեստանի կողմից դրված կուսակալներ, բայց նրանք հայոց նահապետների ցեղից էին: Նրանց իշխանությունը ժառանգական էր, և որդին փոխարինում էր հորը նրա մահից հետո: Հայոց կուսակալներն ունեին իրենց առանձին զորքը, օգնում էին Ասորեստանի թագավորներին պատերազմների ժամանակ և ամեն տարի որոշակի հարկ էին վճարում:

- 1) Հայոց կուսակալները պատերազմների ժամանակ օգնություն էին խնդրում Ասորեստանի թագավորներից:
- 2) Արա Գեղեցիկի իշխանության տարիներից սկսած՝ Հայաստանը կորցնում է իր ինքնիշխանությունը և դառնում է Ասորեստանի պետության ստորադրյալ:
- 3) Հայաստանը կառավարող իշխանները համարվում էին Ասորեստանի կողմից դրված կուսակալներ, և նրանց իշխանությունը ժառանգական էր:
- 4) Հայաստանը կառավարող իշխանները Ասորեստանի կողմից դրված կուսակալներ էին, բայց նրանք հարկատու չէին Ասորեստանին:

7 Ո՞ր շարքի բառերի (բառակապակցությունների) բոլոր բաղադրիչներն են գրվում մեծատառով:

- 1) ԱՇՈՏ ԿԱՌՈՒՅՈՂ, ԲԵԼԳԻԱՅԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ, ԴԱՇՏԱՅԻՆ ԿԻԼԻԿԻԱ, ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ
- 2) ԱՐԻՍՏԱԿԵՄ ԳՐԻՉ, ԱՇՈՏ Բ ԵՐԿԱԹ, ՄԻԻԹԱՐՅԱՆ ՄԻԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ, ՉՄՇԿԻԿ ՍՈՒԼԹԱՆ
- 3) ԲՅՈՒՉԱՆԴԻԱՅԻ ԿԱՅՍՐՈՒԹՅՈՒՆ, ԱՐԵՎԵԼՅԱՆ ՏԱՎՐՈՍ, ԼԵՆՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂ, ՄԵԾ ՀԱՅՔ
- 4) ԱՐՇԱԿՈՒՆՅԱՅ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ, ԲՐԱԶԼԻԱՅԻ ԴԱՇՆԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ, ՓՈՔՐ ՄՇԵՐ, ԴԱՎԻԹ ԱՆՀԱՂԹ

8 Ո՞ր շարքի բոլոր բառերում երկհնչյունի հնչյունափոխություն կա:

- 1) բնավեր, առույգություն, կուրորեն, թունավոր
- 2) մատուցարան, ատենակալ, աշխուժորեն, ակադեմիական
- 3) մեհենական, գունավոր, վայրկենական, առօրյա
- 4) շահութաբեր, մատենագիր, կուտակում, կենսական

9 Ո՞ր շարքի բոլոր բառերում և բառաձևերում է վերջին վանկը շեշտված.

- 1) չորրորդ, գլուխ տալ, գիտակցորեն, եվրոպական
- 2) սովորություն, պատանիները, վազեվազ, լայնատերև
- 3) գիսաստղեր, Հովհաննես, այնպիսի, հոլանդական
- 4) գրեթե, աշակերտից, տանուտեր, բարևներ

10 Ո՞ր նախադասության մեջ բառագործածության սխալ կա:

- 1) Նրա մեղանշումները նոր դժբախտություններ բերեցին արքայական տոհմին:
- 2) Ատաղձագործը շիկացած երկաթը դրեց սալին, որ սկսի իր ամենօրյա աշխատանքը:
- 3) Նշտարը, ինչպես և վիրաբուժական մյուս գործիքները ախտահանվեցին:
- 4) Բրուտանոցը լեփ-լեցուն էր կավե թասերով, որոնք աչքի էին ընկնում ազգային զարդանախշերով:

11 Ո՞ր նախադասության մեջ փոխաբերական իմաստով գործածված բառ կա:

- 1) Այգում երիտասարդ կեռասենիները մրսում էին, քամուց խշշում:
- 2) Հեռվից կապտավուն սարերն այնքան պարզ էին երևում, որ կարելի էր համրել նրանց բոլոր ձորակները:
- 3) Լինե՞ր, այնպես լինե՞ր, որ ինքը հնձվոր լինե՞ր, նրանց արտը հնձե՞ր, Սոնան հաց բերե՞ր իրեն:
- 4) Միրհավն էր. հանգիստ քուջուջ անելով փոխում էր արնագույն տոտիկները:

12 Ո՞ր շարքում դարձվածքի իմաստի սխալ բացատրություն կա:

- 1) տեղը զցել - բնական ընթացքի մեջ դնել, քիթը բարձր պահել - արհամարհանքով վերաբերվել շրջապատին
- 2) ատամը կտրել - կարողանալ մի բան հաղթահարել, բաց դուռ ծեծել - պարզաբանել խրթին հարցը
- 3) գլխին փոթորիկ պայթել - հանկարծակի մեծ անախորժության հանդիպել, մի թելով կարած լինել - նույն բացասական հատկություններն ունենալ
- 4) ոսկե միջին - ծայրահեղությունների փոխզիջում, սրտի ձայնը լսել - առաջնորդվել զգացմունքներով

- 13 **Ո՞ր շարքի բոլոր բառազույգերն են հոմանիշներ:**
- 1) աղորիք - երկանք, հորդ - առատահոս, ջնարակ - շոկոլադ, ժուժկալ - զուսալ
 - 2) կողով - քրոց, կնգուղ - վեղար, բարակ - քերծե, գիշեր - ցայգ
 - 3) անպատճառ - անպաճույճ, տիվ - ցերեկ, հակոտոնյա - ներիակ, մառան - նկուղ
 - 4) կողակից - ամուսին, դժնի - անողորմ, գողտրիկ - թաքուն, ներհուն - լայնախոհ

- 14 **Ո՞ր շարքի բոլոր բառազույգերն են հականիշներ:**
- 1) երկչոտ - վեհերոտ, հոգևոր - աշխարհիկ, հեզ - ամբարտավան, ոտխ - դաշնակից
 - 2) երկրպագել - ատել, ընդդեմ - հանուն, հյուրընկալել - արտաքսել, աստանդական - նստակյաց
 - 3) անպաճույճ - զարդարուն, հին - վաղնջական, վտիտ - գիրուկ, ապաքինվել - հիվանդանալ
 - 4) անասան - կայուն, յուրային - օտար, ստերջ - բեղուն, հնազանդ - ինքնասածի

- 15 **Ո՞ր շարքում հողակապ ունեցող բառ կա:**
- 1) դառնանուշ, ջրարբի, շարիշար, առևտուր
 - 2) բնաշխարհիկ, մականուն, ցողառատ, աչառու
 - 3) բնավեր, սևուսուզ, շաքարավազ, թանապուր
 - 4) շանթարգել, գետնանուշ, բռնարարք, արևառ

- 16 **Տրված բառերի արմատներից որի՞ն կարող է միանալ *-յակ* վերջածանցը և բառ կազմել (առանց երկրորդ ածանցի):**
- 1) հարսնացու
 - 2) հայորդի
 - 3) աղավնատուն
 - 4) հոգեթով

- 17 **Ո՞ր շարքի բոլոր բառերն են բարդածանցավոր:**
- 1) տափօղակ, տրամաշուք, խոտհարք, երեսունչորս
 - 2) բնօրրան, ածխահանք, դիտարժան, տնտեսություն
 - 3) յուրօրինակ, տարկետում, վիպասան, տանտիրուհի
 - 4) բնութագիր, արևայրուք, պարփակել, խոսքարվեստ

- 18 **Ո՞ր շարքում հոգնակի թվի կազմության սխալ կա:**
- 1) աշխատավարձներ, հովանավորներ, ձկնկուլներ, համերգաշարեր
 - 2) ծաղկանախշեր, ապառաժներ, սաղավարտներ, քարհատներ
 - 3) մկներ, դեֆիններ, աստղեր, թագակիրներ
 - 4) պատուհաններ, պատճեններ, աղախիններ, շեղակույտեր

- 19 **Տրված բառերից քանի՞սն են ենթարկվում *ա* ներքին հոլովման:**
- Անուն, զարուն, դոփյուն, հեռագրասյուն, գումարում, դեղատուն, քաջություն, անկյուն, գինետուն, աշուն:*
- 1) բոլորը
 - 2) չորսը
 - 3) հինգը
 - 4) վեցը

- 73 **Թվերի ո՞ր հաջորդականությունն է ճիշտ նշում այն նախադասությունները, որոնցում կետադրական սխալ կա:**

1. Հանճարեղ հայ երգահան՝ Կոմիտասը, որ բազմաթիվ քաղաքներում գրավել էր հանդիսականի սիրտը, ժամանում է նաև Փարիզ:
2. Ճարտարապետը դիտում է կառույցը սյուն առ սյուն, խոյակ առ խոյակ՝ ի վերջո հայացքը ցավով ուղղելով դեպի վեր, որտեղ մի ժամանակ գմբեթն է եղել:
3. Քսան տարի էր անցել, և ոչ մի մասնագետ չէր համարձակվում ձեռնամուխ լինել այդ դժվարին գործին, դա նրանց ուժերից վեր էր:
4. Անահիտը ժպտալով նայեց մեզ և գլխով թեթևակի նշան անելով՝ հրավիրեց պարի. Երվանդը թռավ դեպի նա և սուզվեցին հորձանքի մեջ:
5. Ջգալով զարնան համբույրը, լսելով ձիերի աշխույժ խրխնջունը, գոմեշների լիաթոք բառաչը՝ Պետին՝ բնությանը սիրահարված այդ երիտասարդը, բնության մեջ լինելով, կենդանական հաճույք էր զգում:

- 1) 1, 4
- 2) 2, 4, 5
- 3) 1, 3, 4
- 4) 1, 3

- 74 **Պատասխանների ո՞ր տարբերակում են ճիշտ նշված այն թվերը, որոնց տեղում բութ պիտի լինի (նախադասությունները կետադրված չեն):**

Այդ դաշտավայրում թողնելով իր թռանը(1) Կադմոսին(2) Հայկը մյուսների հետ գալիս հաստատվում է Վանա լճից հյուսիս-արևմուտք ընկած մի լեռնադաշտում (3) այն անվանում Հայք(4) ի պատիվ իր նախահայրերի: Բելի դեկավարությանը(5) հսկա գորք է գալիս Հայաստան(6) հնազանդեցնելու Հայկին: Վերջինս իր գորքին կոչ է անում կամ մեռնել կամ հաղթել այսինքն(7) նահանջելու տեղ չի թողնում: Չորքը լեռներում ամրանալով(8) սկսում է պայքարել: Բաբելացիների դեկավարը(9) գոռոզ Բելը սպանվում է Հայկի նետից հակառակորդի գորքը(10) նահանջում:

- 1) 1, 2, 4, 6, 7, 9, 10
- 2) 2, 4, 5, 6, 7, 9, 10
- 3) 1, 2, 3, 5, 4, 6, 7, 9
- 4) 1, 2, 4, 6, 8, 9, 10

- 75 **Պատկերավորման-արտահայտչական ո՞ր միջոցը չի գործածվել:**

Պտույտ է գալիս ծաղիկ տիրուհին,
Անցնում է, հսկում սեղաններն ամեն,
Հորդորում, խնդրում, որ ուրախ լինին,
Որ լիքն ու առատ բաժակներ քամեն:

- 1) համեմատություն
- 2) մակդիր
- 3) փոխանունություն
- 4) հանգավորում

70 Պարզ (դերբայական դարձվածով) նախադասություններից քանի՞սն են սխալ փոխակերպված բարդի:

- Ներկայի փոքրիկ դառնությունները հեշտությամբ մոռացության են տալիս անցյալում մեր ապրած քաղցր պահերը:
Ներկայի փոքրիկ դառնությունները հեշտությամբ մոռացության են տալիս մեր այն քաղցր պահերը, որ ապրել ենք անցյալում:
 - Նա իմ աչքում բարձրացավ՝ հատկապես արևմտահայ գրականությանը քաջատեղյակ լինելով:
Նա իմ աչքում հատկապես բարձրացավ, որովհետև քաջատեղյակ էր արևմտահայ գրականությանը:
 - Մեր գրականության երախտավորների մասին նրա գրածը անվերապահ վստահության է արժանի:
Այն, ինչ գրել է նա մեր գրականության երախտավորների մասին, անվերապահ վստահության է արժանի:
 - Ի՞նչ գիտեի հայության մասին ես՝ հայրենիքից հեռու՝ օտար միջավայրում ապրածս:
Ի՞նչ գիտեի հայության մասին ես, որ ապրել էի հայրենիքից հեռու՝ օտար միջավայրում:
- երեքը
 - ոչ մեկը
 - մեկը
 - երկուսը

71 Անուղղակի խոսքի փոխակերպման ո՞ր տարբերակն է ճիշտ:

Տանտերն ինձ պատասխանեց, որ ես ինքս եմ կատակասերը. ինքը երեկ հավատաց իմ փուչ ծառայի խոսքերին, իսկ ես այսօր չեմ ուզում հավատալ իր խոսքերին, և բոլորս իրեն ծաղրում ենք:

- Դու ինքդ ես կատակասերը. նա երեկ հավատաց իր փուչ ծառայի խոսքերին, իսկ դու այսօր չես ուզում հավատալ իմ խոսքերին, և բոլորդ ինձ ծաղրում եք, - պատասխանեց ինձ տանտերը:
- Տանտերն ինձ պատասխանեց.
-Դու ինքդ ես կատակասերը. ինքը երեկ հավատաց քո փուչ ծառայի խոսքերին, իսկ դու այսօր չես ուզում հավատալ իր խոսքերին, և բոլորդ ինձ ծաղրում եք:
- Տանտերն ինձ պատասխանեց.
-Դու ինքդ ես կատակասերը. ես երեկ հավատացի քո փուչ ծառայի խոսքերին, իսկ դու այսօր չես ուզում հավատալ իմ խոսքերին, և բոլորդ ինձ ծաղրում եք:
- Տանտերն ինձ պատասխանեց.
-Ես ինքս եմ կատակասերը. ես երեկ հավատացի քո փուչ ծառայի խոսքերին, իսկ դու այսօր չես ուզում հավատալ իմ խոսքերին, և բոլորդ ինձ ծաղրում եք:

72 Տրված նախադասության առանձնացված բառերի շարահյուսական վերլուծության տարբերակներից որո՞ւմ սխալ կա:

Հավատացնում էին, թե նա այնտեղ՝ մի պահարանի մեջ, փայփայելով պահում է այն տրեխները, որոնցով գաղթել էր իր ծննդավայրից տասնհինգ տարեկանում:

- որոնցով – միջոցի անուղղակի խնդիր
- նա - ենթակա
- պահարանի մեջ – տեղի պարագա
- տրեխները – ուղիղ խնդիր

20 Ո՞ր նախադասության մեջ դիմորոշ հոդ կա:

- Օրերս անցնում էին միայնության մեջ, տաղտկալի ու միօրինակ:
- Սրբազան, թող այսուհետև ոչ մի արհավիրք չխափանի աղոթքդ և եկեղեցուդ զանգերի դողանջը:
- Սակայն հիշելով վերստին լույսիդ բարիքներն անհատ՝ Պարզված քեզից համառ թշվառիս, Բո աղերսով քեզ պիտի պաղատեմ...
- Ազգային գրադարանում մեծարում էին ներկայիս ամենահամբավվոր բանաստեղծներից մեկին:

21 Տրվածներից քանի՞սը ածականի գերադրական աստիճան չեն:

Ամենագեղեցիկ, ամենաշնորհ, ամենամեծ, ամենախոր, ամենավատ, ամենահուզիչ, ամենաջերմ, ամենափոքր, ամենասերտ, ամենատես:

- մեկը
- երկուսը
- երեքը
- ոչ մեկը

22 Ո՞ր նախադասության մեջ հարաբերական դերանուն չկա:

- Ոչ ոք չի ասում, ինչ մտածում է, բայց ամեն ոք խոսում է ազնվությունից:
- Այն փողը, որ պիտի տանք փայտի, կծախսենք այլ կարիքներ հոգալու համար:
- Պետք էր Կամսարյանի տեղը լինել՝ հասկանալու համար, թե ինչպիսի տանջանքի ու նահատակության ժամեր էին դրանք:
- Նա արագ մոտեցավ այն սենյակին, ուր քնած էին տանտերն ու նրա երիտասարդ կինը:

23 Ո՞ր շարքի բոլոր բայերն են ա խոնարհման:

- պիտի խաղա, ցնցեց, ջանում է, ցուցլաց
- դարձե ք, ելա, կջանամ, մի՛ տուր
- մոռացել եմ, պիտի կարդայինք, ցնծաց, կտոկան
- կերանք, հոգացող, բարձրացավ, տալիս է

24 Ո՞ր շարքի բոլոր բայերն են սահմանական եղանակի:

- չեմ ներկի, չհուսահատվեցին, գնացել եմ, մոտեցրի
- ունեմ, կամեցավ, գրվելու է, չխոնարհվեցին
- հասա, գալիս է, հուսամ, փախավ
- լսելու է, խոսում եմ, չի կարմրել, լվանաս

25 Ո՞ր նախադասության մեջ ժխտական ձևաբայ (կախյալ դերբայ) կա:

- Չեմ դավաճանի իմ Նվարդին, Որքան էլ դյուրես, օ՛, Շամիրամ...
- Թող ոչ մի գոհ չպահանջվի ինձնից բացի...
- ...Որ փնտրում ենք անկարելի մի խնդություն, Բայց չենք գտնում՝ վազքով տարված ու զբաղված...
- Չշլացա խնդուն փառքիդ Անցյալ ու հին փայլով երբեք...

26 Ո՞ր նախադասության մեջ մակբայ կա:

- 1) Մեղվանոցի մոտով՝ ձորի ճանապարհով, դեպի գետն իջան գյուղ եկած հովեկները:
- 2) Նա վեր կացավ և մոտեցավ չարխին, և ոտքերն սկսեցին շարժվել համաչափ ռիթմով, ինչպես կես դար առաջ:
- 3) Այդ օրերին գյուղը կրկին ստացավ մի գամբիկ՝ տեղական ձիերից բարձր:
- 4) Կապույտ երկնքում՝ արևի կողքին, մի երկու բույս շողում են սավառնակի թևերն ու մարմինը:

27 Ո՞ր նախադասությունն է բարդ (նախադասությունները կետադրված չեն):

- 1) Խարխուլ նրբանցքով ուր որ է ներս կմտնեին որք մանչուկին փնտրող ոստիկանները ահաբեկելով բախում ապրող բոլոր մարդկանց:
- 2) Երկօրյա դադարից հետո նորից աղմուկ և մարդիկ խուճապահար փախչում են:
- 3) Ես այդ դեպքերից սարսափած նայում եմ չգիտես որտեղից եկած փախստականներին:
- 4) Մեկը մեկից ամաչելով և գուսպ և հավաք նստում էին մերոնք կարգով կրտսեր ու ավագ:

28 Ո՞ր տարբերակում է ենթակայի արտահայտությունը սխալ նշված :

- 1) Այցելողը կարող է տեսնել մարդկության վաղնջական ժամանակների՝ առեղծվածներով լի կյանքի պատկերը: (դերբայ)
- 2) Նրա մոտ նստածը մանկահասակ, նագելի, սիրունատես երիտասարդ մի կին էր: (սծական)
- 3) Դրանք իրարից բոլորովին անջատված հայկական գավառներն էին: (դերանուն)
- 4) Տեղ-տեղ հաղորդակցությունը կտրում էին մթին, անթափանց անտառները: (գոյական)

29 Ո՞ր նախադասության մեջ դերանունով արտահայտված որոշիչ կա :

- 1) Ի՞նչ ես գազագում, իմ վիրավոր սիրտ, Որ գազագում ես, ի՞նչ պիտի անես:
- 2) Ջմրուխտյա երգեր, երազներ շքեղ Գարնան վարդի հետ եկան, գնացին:
- 3) Է՛յ դու, ջահել, հպարտ հասակ, Անցար ոսկի ամպի պես:
- 4) Այս ձորերում ամեն ինչից Օրորոցի հոտ է գալիս:

30 Ո՞ր նախադասության մեջ համաձայնության սխալ կա:

- 1) Թումանյանին՝ որպես հյուրընկալ տանտիրոջ ու անգուգական սեղանակցի, շատերն են ճանաչում, բայց երևի ոչ բոլորը գիտեն խաշի հայտնի պատմությունը:
- 2) Կա և՛ թախիծ այդ երգի մեջ, կարծես մեկը մոլորվել է խոր ձորերում և տխուր հեկեկում է, կա և՛ ջինջ ուրախություն, երբ լեռների վրա ծագում է արևը, վերջապես կա և կարոտի հնչյուններ՝ վերադարձի և վերջին հույսի:
- 3) Նրա ելույթից հետո ժողովուրդը մի պահ քարացած մնաց, ապա հանկարծ զարթնեց որոտընդոստ ծափերի մի տեղատարափով:
- 4) Արաբական Միացյալ Էմիրությունները կազմավորվել է 1971 թ. դեկտեմբերին և գտնվում է Պարսից ծոցի հարավային ափերին:

67 Ո՞ր ստորադաս նախադասությունն է հարաբերական դերանվանք կապակցվել գերադասին (գլխավորին):

- 1) Ով իմանա՝ ո՛րը ընկանք, Քանի՛ օրվա հյուր ընկանք:
- 2) Ո՛վ իմանա՝ ո՛ր սիրունի բիբն ես կոխում դու հիմի...
- 3) Ով եկել էր՝ թողած հեռուն անծայրածիր մութը գյուղի, Բերել էր իր մկաններում բեղմնավորված ուժը հողի:
- 4) Եվ ո՞վ կասի՝ ինչո՞ւ ես դու, և ո՞վ կասի, թե ուր հասար...

68 Պատասխանների ո՞ր տարբերակում են ճիշտ նշված բարդ նախադասությունների ստորադաս (երկրորդական) նախադասությունների պաշտոնները (պաշտոններից մեկն ավելորդ է):

1. Ծիծաղախիտ ծովի ծփանքն այնքան կենարար էր, որ ճակատագրից հալածված մարդիկ մի վայրկյան կարծես մոռացության տվեցին իրենց տառապանքը:
2. Նրան թվում էր, թե ինքը ժամանակից ու տարածությունից դուրս էր մղված:
3. Ամենից բարձր հոխորտում էիր դու, որ ստեղծված իրավիճակի բուն մեղավորն էիր:
4. Այժմ նա հալածվում էր նրանցից, ովքեր ժամանակին աջակցել էին իրեն:

- ա. ձևի պարագա
- բ. չափի պարագա
- գ. բացահայտիչ
- դ. ներգործող խնդիր
- ե. ենթակա

- 1) 1-բ, 2-ե, 3-գ, 4-դ
- 2) 1-ա, 2-ե, 3-դ, 4-գ
- 3) 1-բ, 2-ա, 3-գ, 4-ե
- 4) 1-ե, 2-բ, 3-գ, 4-դ

69 Ո՞ր նախադասությունն է ներգործական կառուցվածքի:

- 1) Սիրեցի հեզ, անքեն հոգիդ Եվ երգերդ մեղմ ու բեկբեկ:
- 2) Ծաղկած սարի փեշերին Դու սպասի՛ր իմ դարձին...
- 3) Քո կասկածներից հոգիս խռովվել, Միտքս պղտորվել ու տրտնջում է....
- 4) Նագում ես ու շորորում գնրուխտե քո շորերում:

62 Ո՞ր նախադասության մեջ ներգործական սեռի բայ չկա:

- 1) Բոցը հասավ դեղնած արտերին, կրակը լավեց և՛ սերմ, և՛ սերմնացան:
- 2) Հագրոն առավ իր կնոջն ու աղջկան, անցավ լեռից լեռ, քարանձավից քարանձավ:
- 3) Նա հանեց ծիրանի փողը, որով նվագել էր կապույտ լեռների երգը:
- 4) Եղան բռնություններ, թշնամին ձորերով բարձրացավ մինչև նրանց խեղճ խրճիթները:

63 Ընդգծված անկանոն բայերից որի՞ մեջ է անկանոնություն դրսևորվել:

- 1) Եվ ո՞վ **կասի՝** ինչո՞ւ ես դու, և ո՞վ կասի, թե ո՞ր հասար...
- 2) Ուրիշ բլբուլ **կգա** կմտնի բաղը, Ուրիշ աշուղ կասե աշխարհի խաղը:
- 3) Հայաստա՛ն, անունդ **տալիս** Ժայռի մեջ մի տուն եմ հիշում:
- 4) Քամին սարերից առաջին ձյունի Փռչին է բերում և շաղ է **տալիս** Բոբիկ ոտներին ու փշաքաղված մազերին վրա:

64 Տրված հատվածի առանձնացված բառերի ձևաբանական վերլուծության տարբերակներից որո՞ւմ սխալ կա:

Եվ գուցե միայն սենյակում մի խուլ,
Գլուխը թեքած պատկերիս վրա,
Կնայի մի կին աչքերիս տխուր,
Ու կարցունքոտվեն աչքերը նրա:

- 1) **կարցունքոտվեն** - ենթադրական ապառնի, չեզոք սեռ, ու - համադասական շաղկապ
- 2) **գուցե** - վերաբերական, **խուլ** - որակական ածական
- 3) **թեքած**-դիմավոր բայ, հարակատար դերբայ, ներգործական սեռ, **վրա** - կապ
- 4) **կին** - ուղղական հոլով, **ոչ** արտաքին հոլովում, **մի**- անորոշ դերանուն

65 Փակագծերում տրված բառերի ո՞ր հերթականությունն է համապատասխանում նախադասության մեջ դրանց տեղադրման ճիշտ կարգին (բառերը տրված են ուղիղ ձևով):

Հնդկական առածը ----- . «----- լեզուն առյուծ է. եթե -----, քեզ կպաշտպանի, եթե թողնես, քեզ -----»:

(1. կապել, 2. հռչոտել, 3. դու, 4. ասել)

- 1) 4, 1, 2, 3
- 2) 1, 4, 2, 3
- 3) 2, 3, 4, 1
- 4) 4, 3, 1, 2

66 Ո՞ր նախադասության մեջ հանգման անուղղակի խնդիր կա:

- 1) Աշխատում էինք լուսաբացից մինչև իրիկուն, և մեզ թվում էր, թե մեր ընտանիքում ոչինչ չի պատահել:
- 2) Սակայն մերոնց վիշտն անթեղած կրակ էր, որ մերթ բոցավառվում էր որպես պայծառ հույս, մերթ դառնում մարմինն սվող տկար կայծ:
- 3) Այդ իրիկուն տատա ջոկեց պանրի յուղոտ կտորները, և մենք հասկացանք, որ նա քաղաք է տանելու նաև պոչը ծաղիկ երինջին, որը մեր բոլորի սիրելին էր:
- 4) Նրանք երկուսով անիծում էին մեզ, պատմում մեր չարածճի արարքների մասին:

31 Ո՞ր նախադասության մեջ խնդրառության սխալ չկա:

- 1) Ինձ ներողություն մի՛ խնդրիր չարած սխալներիդ համար:
- 2) Մի՞թե ես հանցագործ եմ, որ հսկում ես բոլոր քայլերիս:
- 3) Հայրը միշտ սատարել էր որդու բոլոր ձեռնարկումներին:
- 4) Պետք չէ հակադրվել ակնհայտ ճշմարտություններին:

32 Ո՞ր նախադասության մեջ շարադասության սխալ կա:

- 1) Ամայի ու վայրի մի տեղ կա աշխարհի հեռավոր ծայրում՝ սկյութների երկրում:
- 2) Բայց միշտ պետք է զգուշանալ, որ հոգու սեփական կորստյան վտանգ չլինի:
- 3) Չեխիայի գիտությունների ակադեմիայի ֆիզիոլոգիայի ինստիտուտի գիտնականներն ստեղծել են էլեկտրական բազմաթիվ սարքեր:
- 4) Ուրախ-ուրախ պարում ու ցատկոտում են հավերժահարսերն անտառի բացատում:

33 Ո՞ր տարբերակում է պարզ (դերբայական դարձվածով) նախադասությունը ճիշտ փոխակերպված բարդի:

Անգամ միամիտ և հրապուրիչ Օֆելյան՝ աշխարհիկ կեղծավորությամբ կիսովին ապականված այդ հազվագյուտ մանուշակը, այլևս չի հուզում Համլետի անտարբեր սիրտը:

- 1) Անգամ միամիտ և հրապուրիչ Օֆելյան՝ այդ հազվագյուտ մանուշակը, որ կիսովին ապականված է աշխարհիկ կեղծավորությամբ, այլևս չի հուզում Համլետի անտարբեր սիրտը:
- 2) Անգամ միամիտ և հրապուրիչ Օֆելյան, որ աշխարհիկ կեղծավորությամբ կիսովին ապականված հազվագյուտ մի մանուշակ է, այլևս չի հուզում Համլետի անտարբեր սիրտը:
- 3) Անգամ միամիտ և հրապուրիչ Օֆելյան՝ այդ հազվագյուտ մանուշակը, այլևս չի հուզում Համլետի անտարբեր սիրտը, քանի որ կիսովին ապականված է աշխարհիկ կեղծավորությամբ:
- 4) Անգամ միամիտ և հրապուրիչ Օֆելյան՝ աշխարհիկ կեղծավորությամբ կիսովին ապականված այդ հազվագյուտ մանուշակն է, որ այլևս չի հուզում Համլետի անտարբեր սիրտը:

34 Նշվածներից ո՞րը չկա ստորև բերված հատվածում (նախադասությունները կետադրված չեն):

Մարդը որ ամեն անգամ հայտնվում էր բեմում ներկայացնելու արտիստի անելիքը չհայտնվեց: Ծափերը բուռն ու պահանջող չէին դադարում: Վերջապես բեմ ելավ արտիստը կանգնեց բեմի կենտրոնում ժպիտներից ամենահրապուրիչը շուրթերին: Հանդիսականների արտիստի դեմքին գամված հայացքներում խտացավ անհամբեր սպասումը:

Արտիստն այս անգամ ընտրել էր տերյանական գոհարներից մեկը «Անդարձություն»:

- 1) գեղչված ստորոգյալ
- 2) դերբայական դարձված
- 3) բացահայտիչ
- 4) տրոհված հատկացուցիչ

35 Ո՞ր նախադասության մեջ կենտարական սխալ չկա:

- 1) Երբ արդեն ներսում էր, ասաց, որ քաղցած չէ, ուզում է քնել. նա ամեն կերպ ճգնում էր կռահել՝ այդ վատ բանը կատարվե՞լ է, թե՞ ոչ:
- 2) Նա, անակնկալի գալով, գրեթե ցնծաց, երբ մի պահ հանկարծ զգաց, որ կարողանում է թղթի վրա մարդկանց դիմագծեր ուրվագծել՝ անգամ աչքերը փակած:
- 3) Մենելայոսը գրկաբաց ընդունեց եկվորներին և հյուրընկալության հենց առաջին օրը նրանց պատվին մի ճոխ խնջույք կազմակերպվեց, որը ժամեր անց՝ կեսգիշերին, վերածվեց արբշիռ գինարբուքի:
- 4) Ինչևէ, փաստն այն էր, որ պայթյունը միայն թեթևակի ցնցել էր շենքը՝ թողնելով այն անվնաս մնա, բայց դժոխային մեքենայի՝ սարսափ առաջացրած պայթյունից հրդեհ էր բռնկվել:

36 Ո՞ր տարբերակում փոխանունություն կա:

- 1) Մուրը հոգին տվեց, և աստղերը մեռան ...
- 2) Երագիս մեջ ես ինձ տեսա քո աչքերով, Քո աչքերով, քո աչքերով ճանաչեցի:
- 3) Մշուշներն էլի աշուն կհուշեն, Բարդիներն էլի Տերյան կկարդան ...
- 4) Տատրակներն արտին հրաժեշտ կտան ...

37 Նախադասությունները նշող թվերի դասավորության ո՞ր տարբերակն է համապատասխանում այդ նախադասությունների տրամաբանական և քերականական ճիշտ հաջորդականությանը:

1. Եվ ամերիկյան ընթերցողները զարմացան ու հիացան, որովհետև Սարոյանը մինչև այդ իրենց անձանոթ մի երակ էր բերում գրականության մեջ՝ հայկական ոգու երակը:
2. Հիրավի, արժանավոր մի շառավիղ է Վիլյամ Սարոյանը, որ, սակայն, ընկել է մի այլ միջավայր ու այլ մի դար:
3. Ամեն անգամ, երբ ես Սարոյան եմ կարդում, ինձ այնպես է թվում, թե նա արժանավոր շառավիղն է մեր անանուն ու անհայտ գուսանների, որոնք դարերի խորքում մեր հանճարեղ էպոսն են հյուսել:
4. Մտնելով ամերիկյան գրականության ասպարեզ՝ նա ժողովրդական ասացողների պարզ ու խոր խոսքով սկսեց իր միջավայրի ու դարի սքանչելի էպոսները հյուսել:

- 1) 2, 4, 1, 3
- 2) 3, 1, 2, 4
- 3) 3, 2, 4, 1
- 4) 2, 3, 1, 4

57 Տրված բառիմաստները համապատասխանում են ձախ շարքի բառերից չորսին. ո՞ր շարքի բոլոր պատասխաններն են ճիշտ:

- | | |
|-----------|-----------------------|
| ա. ակուբ | 1. ամառանոց եկած մարդ |
| բ. անութ | 2. կավագործ վարպետ |
| գ. հովեկ | 3. տաք քամի |
| դ. բրուտ | 4. թևի տակը |
| ե. խորշակ | |

- 1) ա -4, գ - 2, դ - 1, ե - 3
- 2) ա - 4, գ - 1, դ - 2, ե - 3
- 3) բ - 4, գ - 3, դ - 2, ե - 1
- 4) բ - 4, գ - 1, դ - 2, ե - 3

58 Ո՞ր բառի բառակազմական վերլուծության մեջ սխալ կա:

- 1) մոխրագույն - մոխիր, գույն՝ արմատներ, ա՝ հոդակապ
- 2) ցորենամրիկ - ցորեն, մրիկ՝ արմատներ, ա՝ հոդակապ
- 3) ճամփաբաժան - ճամփա, բաժ՝ արմատներ, ան՝ վերջածանց
- 4) հրագանգուր - հուր, գանգուր՝ արմատներ, ա՝ հոդակապ

59 Ո՞ր շարքում դարձվածքի իմաստի սխալ բացատրություն կա:

- 1) ժամավաճառ լինել - իզուր ժամանակ վատնել, երեսից կախվել - թախանձել
- 2) արյունը ջուր դառնալ - սահմոկել, աչքերը փակել - մեռնել
- 3) աչքը ջուր կտրել - կարոտով, անհամբերությամբ սպասել, անձյուն ձմեռ - անճարակ մարդ
- 4) գլխարկը թեք դնել - նորածն հագնվել, գլխին տալ - զոջալ

60 Ո՞ր նախադասության մեջ բաղադրյալ դիմավոր ժամանակաձև կա:

- 1) Աշնան մի օր, երբ մի գյուղից մյուս գյուղն էր նա գնում, մշուշը ծածկեց նեղ արահետը:
- 2) Որտորդ էի, լեռների վրա պատահեցի մի եղնիկի, առանց երկյուղի կանգնեց նա և նայեց ինձ մտերիմ հայացքով:
- 3) Մենք մենակ էինք. ես նստեցի անկյունում՝ պատուհանի մոտ՝ դյուրված հեռավոր, հավերժական աստղերով:
- 4) Սլացի՛ր, գնա՛, ի՛նձ նժույգ, ի՛նձ սե՛ր հրեղեն, և խիզախ սմբակդ դի՛ր, ուր որ կամենաս:

61 Ո՞ր տարբերակում ներկա ժամանակի բայաձև կա:

- 1) Չգիտեմ՝ այս տխուր աշխարհում Ո՞րն է լավ, որը՝ վատ ...
- 2) Գնամ. ուր որ է ձերմակ մշուշով Չյունն իջնելու է, կիրճերը փակի ...
- 3) Ամայի դաշտում նստեմ միայնակ,- Մեռնող հուշերս փայլալայն ու լամ:
- 4) Մի՛ կանչեք ինձ, հույսի նոր Խոսքերով ինձ մի՛ դյուրեք...

- 51 Ո՞ր շարքի բոլոր բառերի ընդգծված *ե*-ն է արտասանվում *է*:
- 1) գուգեթ, ամենաեքրագլոտ, անեքրակայելի, վերեթ
 - 2) գետեգր, ինքնաեք, վերեթ, անեքեր
 - 3) գարկեթակ, մենեթգ, ուղեթթ, տասնեթերթ
 - 4) կիսաեփ, անեգր, առեքրույթ, թեական
- 52 Ո՞ր տարբերակում է տառի կամ տառակապակցության թվային արժեքը ճիշտ նշված:
- 1) ՏՄՀԸ – 4277
 - 2) ՓՅԲ - 8302
 - 3) ԲԳԽ - 5940
 - 4) ՊԿԶ - 867
- 53 Տրված բառաշարքերից քանիսի՞ր բոլոր բառերի բաց թողած տեղում է գրվում միևնույն տառը:
1. ադամամու-, թա-երական, գվար-աճայն, ակնթար-, համըն-աց, ակու-
 2. կմա-ք, հա-ճապակի, թ-պոտ, տա-տակ, թա-ծալի, նա-շքար
 3. անդրավարտի-, տրտմաշու-, ծեքծե-ուն, թեգանի-, փեղ-, ջրօրհնե-
 4. ակնակապի-, կապար-, սո-ենի, պ-նվել, գո-ի, ա-պարար
- 1) չորսի
 - 2) երեքի
 - 3) մեկի
 - 4) երկուսի
- 54 Տրված բառերում հնչյունափոխության քանի՞ դեպք *կա*:
- Լրատվական, մարդահամար, թանձրամտություն, խաղասեր, կրթամշակութային, հողածին, թրածուկ, մարտակարգ, փոթորկահույզ, սանրել:
- 1) հինգ
 - 2) ինը
 - 3) վեց
 - 4) տասը
- 55 Ո՞ր շարքում բառիմաստի սխալ բացատրություն կա:
- 1) *այտուց* - ուռուցք, պալար, *այսպանել* - նախատել, անարգել
 - 2) *քախտակ* - ձկան տեսակ, *գրգամոլ* - փափուկ կյանք սիրող
 - 3) *ակնակապիճ* - աչքի փոսիկ, *ադամորդի* - մարդ արարած
 - 4) *անպաճույճ* - առանց զարդարվելու, *բամբիշ* - լուր բերող
- 56 Ո՞ր տարբերակի ընդգծված բառերը համանուններ չեն:
- 1) մի *կաթ* արցունք - թարմ *կաթ*
 - 2) *ծարավ* երեխա - *ծարավ* այգի
 - 3) եռանկյան *էջ* - գրքի *էջ*
 - 4) աղեկտուր *լալ* - *լալ* ու մարջան

- 38 Որ հատվածը հայերենի ո՞ր տարբերակով է:
- ա. Անձինն ի շարժել մարգարտափայլ գեղով.
Ոտիցն ի գնալ շողն ի կաթել առնոյր:
 - բ. ...Նարդոս, քրքում էր ինձ բերում,
Վարդ մանուշակ էր պարգևում,
Առավոտյան ցողն էր իջնում,
Ոսկենման շողն էր փայլում...
 - գ. Դու՛ն կըրակ, հաքածըդ կըրակ,
վո՞ւր մե կըրակին դիմանամ,
Հընդու դալամքարու վըրէն ծածկիլ իս
մարմաշ, նագա՛նի:
 - դ. Պագըն որ դրամով լինի, չե՛մ իտար, թ՛աշխարհ արերի,
Թէ ինձ մուրատով կուզես, եկո պա՛գ, հաւատդ անցանի:
1. գրաբար
 2. միջին հայերեն
 3. թիֆլիսահայ բարբառ
 4. արևելահայերեն
- 1) ա-1, բ-3, գ-2, դ-4
 - 2) ա-1, բ-4, գ-3, դ-2
 - 3) ա-1, բ-4, գ-2, դ-3
 - 4) ա-4, բ-1, գ-2, դ-3
- 39 Ո՞ր տարբերակի թվերի դասավորությունն է ճիշտ նշում 5-րդ դարի հայ պատմիչների ժամանակագրական հաջորդականությունը:
- ա. Փավստոս Բուզանդ
 - բ. Ագաթանգեղոս
 - գ. Եղիշե
 - դ. Ղազար Փարպեցի
- 1) գ, ա, բ, դ
 - 2) ա, բ, դ, գ
 - 3) բ, ա, գ, դ
 - 4) բ, գ, դ, ա
- 40 Ըստ «Մասնա ծոեր» էպոսի («Մասունցի Դավիթ» համահավաք բնագիր)՝ ի՞նչ վախճան է ունենում Դավիթը:
- 1) Հոր անեծքի պատճառով փակվում է Վանա քար կոչվող ժայռում:
 - 2) Մեռնում է բնական մահով:
 - 3) Սպանվում է իր դստեր թունավոր նետից:
 - 4) Չոհվում է Մսրա Մելիքի դեմ մղած ճակատամարտում:
- 41 Ո՞ր ստեղծագործությունից է տրված հատվածը:
- Մի՛ բազմապատկիր ցավս հեծության
Եվ մի՛ խոցոտիր վիրավորվածիս,
Մի՛ դատապարտիր արդեն պատժվածիս,
Բազմաչարչարիս մի՛ տանջիր նորեն...
- 1) «Հեռացումի խոսքեր», Եղիշե Չարենց
 - 2) «Բիբլիական», Հովհաննես Շիրազ
 - 3) «Մատյան ողբերգության», Գրիգոր Նարեկացի
 - 4) «Գանգատ», Ֆրիկ

- 42 **Ո՞ր պնդումը ճիշտ չէ Սայաթ-Նովայի ստեղծագործության վերաբերյալ:**
- 1) Նրա հայրենասիրական տաղերը նույնքան բարձրարժեք են, որքան սիրային տաղերը:
 - 2) Բանաստեղծը դիմել է հայ քնարերգության ավանդներին, ինչպես նաև օգտագործել է արևելյան շռայլ պատկերներ:
 - 3) Նա կատարելության է հասցրել կնոջ արտաքին գեղեցկության գովքը:
 - 4) Սայաթ-Նովան իր երգերում հաճախ դատապարտել է հասարակության չարիքներն ու արատները, ծառայել սոցիալական անհավասարության դեմ:

- 43 **Միքայել Նալբանդյանի ո՞ր բանաստեղծությունից է տրված հատվածը:**
- Ներկա օրերում այլ ի՞նչ սև քնար,
Սուր է հարկավոր կտրիճի ձեռքին:
- 1) «Ապոլլոնին»
 - 2) «Մանկության օրեր»
 - 3) «Ազատություն»
 - 4) «Իտալացի աղջկա երգը»

- 44 **Նշված հարցադրումներից ո՞րը չկա Խաչատուր Աբովյանի «Վերք Հայաստանի» վեպի «Հառաջաբանում»:**
- 1) արթնացնել հայոց ազգային արժանապատվության զգացումը
 - 2) նկարագրել ժողովրդի կյանքն ու նվիրական զգացմունքները՝ սերը, բարեկամությունը, ծնողասիրությունը...
 - 3) ներկայացնել կրոնի երկրորդական դերը հայ ժողովրդի գոյության հարցում
 - 4) կենդանություն տալ անձնագրի հայորդիների գործերին

- 45 **Հակոբ Պարոնյանի «Մեծապատիվ մուրացկաններ» վեպում ի՞նչն է Աբիսողոմ աղային ստիպում չորս ոսկի շնորհելու բանաստեղծին:**
- 1) բանաստեղծի ներկայությունից արագ ազատվելու ձգտումը
 - 2) խղճահարությունը բանաստեղծի նկատմամբ
 - 3) իրեն նվիրված ձոներգ գրել տալու ցանկությունը
 - 4) մեկենաս լինելու փառասիրությունը

- 46 **Ո՞ր շարքի բոլոր հերոսներն են Բաֆֆու «Մամվել» պատմավեպից:**
- 1) Շապուհ արքա, Փառանձեմ թագուհի, Գոռ իշխան, Մամվել
 - 2) Մերուժան Արծրունի, Հովհաննես կաթողիկոս, Արշակ Երկրորդ, Դրաստամատ
 - 3) Սահակ Պարթև, Աշխեն, Մուշեղ Մամիկոնյան, Համազասպուհի
 - 4) Որմիզդուխտ, Վասակ Սյունի, Տաճատուհի, Հուսիկ

- 47 **Մուրացանի «Գևորգ Մարգալետունի» պատմավեպի վերաբերյալ ո՞ր պնդումն է սխալ:**
- 1) Գևորգ Մարգալետունին չի ընդունում Աշոտ Երկաթի վարքագիծը, բայց ծառայում է նրան՝ որպես երկրի թագավորի:
 - 2) Աշոտ Երկաթի կյանքի ու պայքարի առաջին շրջանը ներկայացված է Սահականույշի և Մեդայի գրույցների միջոցով:
 - 3) Սահականույշ թագուհին զուրկ չէ դշխոյական փառասիրությունից:
 - 4) Մուրացանը Հովհաննես կաթողիկոսին ներկայացրել է որպես անձնագրի և հայրենասեր գործչի:

- 48 **Ո՞ր շարքի բոլոր հերոսներն են Ալեքսանդր Շիրվանզադեի «Քառս» վեպից:**
- 1) Անտոնինա Իվանովնա, Ռսկեհատ, Անուշ, Մարթա
 - 2) Մարկոս Ալիմյան, Միքայել, Արշակ, Բագրատ
 - 3) Սմբատ Ալիմյան, Մարութխանյան, Շուշանիկ, Երանուհի
 - 4) Չուպրով, Ռասուլ, Կարապետ, Սաղաթել

- 49 **Տրված հատվածը Գրիգոր Չոհրապի ո՞ր նորավեպի վերջնամասից է. «Գիտեր, ստույգ գիտեր ալ, որ ամուսինը չափտի գար. բայց իրիկունը, առանց ուզելու, քայլերը կ'առաջնորդեին զինքը այն արտը, ուրկե վերջին անգամ տեսած ու Պոլիս ճամբած էր իր երիտասարդ էրիկը»:**
- 1) «Այինկա»
 - 2) «Երջանիկ մահը»
 - 3) «Փոստալ»
 - 4) «Այրին»

- 50 **Նշել բանաստեղծական տողերի ճիշտ հաջորդականության տարբերակը:**
- ա. Հայոց լեռներում
բ. Տանում է իրեն վերքերն անհամար
գ. Թալանված, ջարդված
դ. Սուգի լեռներում
ե. Ու հատված-հատված
զ. Ու մեր քարվանը շրվոթ, սուկահար
- 1) գ, գ, ե, բ, ա, դ
 - 2) ե, գ, ա, դ, բ, գ
 - 3) գ, բ, գ, ե, դ, ա
 - 4) բ, գ, ա, դ, գ, ե